տէ ինքզինք կերտել ու կատարելագործել, օգտագործելով բոլոր հնարքները եւ պարագաները՝ որ կը ներկայանային։ Իր կեանքը յարատեւ աշխատանք մըն է· առանձնաշնորհեալ իրերով չէ որ կը կազմուի ու կը հաստատուի, այլ ամէնօրեայ ամէն տեսակ իրերով, որ ճամբու ընթացքին կրնան յայտնուիլ եւ կարելի է գործածել· արդելքներն անդամ կը ջանայ լծակներու վերածել։ Վենետիկ իր գրական ու գիտական բարձր մակարդակով կարծես կը պարտաւորէ որ Մխիթար իր կղզեակէն յանձնուի այն իմացական հոսանքին, որ քաղաքի կրթական եւ ուսումնական բարձր շրջանակներուն մէջ մշակոյթի կեանքը կ՚առաջնորդէր։ Այս սիրալիր պաշտամունքը դէպի իմացական կեանքը ու Մշակոյթի մարդերը՝ կը թողու իր որդիներուն իբր իր հոգւոյն անշէջ հրայրքը՝ որպէսզի միշտ անաղարտ պահուի իր Միաբանութեան մէջ։

Վենետիկ մեծապէս հասունցուցած է նաեւ Մխիթարի մէջ բարեխառնութեան հոգին, ստեղծելով անդորրացեալ հոգեվիճակ մը։

Գուցէ Մխիթարի դիմագծին, աչքերու նայուածքին ու վերապահ կեցուածքին մէջ նշմարուի խստամբերի կերպարանք մը։ Սակայն Մխիթար զգայուն հոգի մըն է, գորովով եւ գութով լեցուն, միշտ արթուն, հսկող եւ հոգածու սիրով հեռեւող իր որդիներու կեանքի հանգըրուաններուն, ինչպէս ցոյց կու տայ Նամականին։ Հեռուէն հոգեւին ապրած է անոնց բոլոր հարցերը եւ դժուարութիւնները, յոյզերն եւ մտահոգութիւնները։ Ինքը արդէն անցած էր պայքարներու եւ փոթորիկներու բովէն· անպակաս եղած են օտարներու կողմէ հակառակութիւն, թշնամութիւն եւ հալածանք· իրեններէն ալ երբեմն ունեցաւ յուսախաբութիւններ· յետոյ կար ամէնօրեայ տաժանակիր աշխատանքը թէ՛ նիւթական եւ թէ՛ բարոյական։ Բայց միշտ իրեն համար կեանքը կատարած է կարծես մայրախնամ դայեակի մը դերը։ Ցեղին տարիներուն՝ իր զրուութեան ոճին մէջ, ինչպէս նաեւ գործելու եղանակին մէջ, կը նկատուի անդորրացած հոգի եւ տրամադրութիւն մը։ Վենետիկ իր անաղմուկ եւ խաղաղ անշարժութեան մթնոլորտով պէտք է որ կատարած ըլլայ բարերար ազդեցութիւն մը։ Մօտ էր իր կեանքի մայրամուտն ալ, ու ապահով նկատած պիտի ըլլայ Վենետիկի մայրամուտներու ծովացեալ շքեղութիւնը, երբ լճակը ամբողջապէս կարմրավայլ ճառագայթում դարձած, այդ բիւրեղացած զանգուածէն անհուն քաղցրութիւն մը կ՚անջատուի եւ կ՚ողողէ մթնոլորտը, եւ կու գայ օծելու զգայարանքներդ եւ էութիւնդ։ Անկարելի է որ այդ անհուն քաղցրութեան ամենազօր լիութիւնը համակած չըլլայ Ս· Ղազար կղզեակի Վերանորոգիչը, որու դիմագիծը՝ այդ յետին տարիներուն՝ ստացած է նահապետի մը վեհութիւնը եւ պայծառութիւնը, երբ վերջացուցած է արդէն Աստուածաշունչի հրատարակութիւնը, Մատթէի Աւետարանին Մեկնութիւնը, եւ լրանալու մօտ է Հայկազեան Բառարանի առաջին հատորին տպագրութիւնը։ Վենետիկ չեղաւ իր օրրանը, բայց եղաւ իր աշխատանոցը, եղաւ իր համալսարանը, ու կերտեց Մխիթարի մէջ Վանական Ընկերութեան մը հիմնադրի բուն դիմագիծը եւ հոգին։ Գուցէ այդ մայրամուտները, որ իր աչքերէն կը դողնային արեւը՝ յաջորդ առաւօտ կրկին ընծայելու համար՝ իրեն համար անոնք խորհրդանիշն եղած ըլլան մեր ցեղի գրական եւ հոգեկան արժէքներուն վերածաղկումին· եւ արդէն ինքը այս նպատակին նուիրած էր իր ամբողջ կեանքը, ու այդ յոյսով ալ փակեց իր աչքերը։

Իրապէս կարելի է ըսել, առանց սխալելու, թէ մեր տոհմային Մշակոյթին գըտնահատման, մեր հոգեկան դանձերուն դեղեցկութեան պաշտամունքին, հայրենիքի դաստիարի նուիրականութեան գիտակցութիւնը, 1700է յետոյ, ծնունդ առաւ Մխիթար Սեբաստացիի հաւատքէն։

ՎԵՆԵՏԻԿԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՆԵՐԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

(Ս· ՂԱԶԱՐԻ 250ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ)

Գրեց՝ Փ· Փ· ԱՆԹԱԲԵԱՆ (Երեւան)

Մխիթարեան Միաբանութիւնը իր 250-ամեայ գոյութեան ընթացքում՝ զգալի ծառայութիւններ է մատուցել հայրենի գիտութեան եւ մշակոյթի զարգացմանը։

Որպէս հոգեւոր Միաբանութիւն, Մխիթարեանները առաջին հերթին հետապնդում էին կրօնական նպատակներ, սակայն մեծ են եղել այն ջանքերը, որ նրանք գործադրել են հայագիտութեան տարբեր բնագաւառների առաջընթացի համար։ Այս ուղղութեամբ կատարած առաջին քայլերից է Մխիթար Սեբաստացու «Դուռն քերականութեան աշխարհաբար լեզուին Հայոց»[1] երկասիրութիւնը, որով վենետիկեան Մխիթարեանները հիմք են դնում քերականագիտական ծաւալուն աշխատանքի։ Նրանք օգտագործում են նախորդ հայ քերականագէտների փորձը, հետաքրքրում հայ մատենագրութեան հետազօտում հայ մատենագրութիւնը, ստուգում իւրաքանչիւր բառի ճեւաբանական եւ շարահիւսական յատկանիշները, համեմատում եւ ճշգրտում նկատուած օրինաչափութիւնների տեսակն ու տեղը։ Նրանք եւրոպական քերականագիտութեան նուաճումներն էլ հաշուի առնելով՝ հայ քերականագիտութեան գիտական նոր համակարգ ու եզրաբանութիւն են ստեղծում։ Շուրջ երկու դար լայնօրէն կիրառութեան են դրուում Վենետիկի Մխիթարեան քերականներ Հ· Մ· Զամչեանի, Հ· Գ· Աւետիքեանի, Հ· Ա· Բագրատունու սոյն բնագաւառի յայտնի երկերը[2], որոնք մեծ դեր են կատարել դասական հայերէնի ուսումնասիրութեան, ժամանակակից գրաբարի եւ աշխարհաբարի մշակման ու բարեկարգման բնագաւառում։ Ցիշեալ երկերը ակնառու հետք են թողել ներկայ հայ քերականագիտութեան մէջ՝ քննադատաբար օգտագործուելով մեր անուանի լեզուաբանների կողմից։

Հարկ է յիշեցնել, որ Մխիթարեանների քերականագիտութիւնը չի սպառւում յիշեալ հեղինակների երկերով։ Նրանք կազմել ու հրատարակել են նաեւ ուրիշ քերականական աշխատութիւններ, որոնցից մի քանիսը օտար լեզուների ճեւաբանութեանն ու շարահիւսութեանն են վերաբերում[3]։

1. Դուռն քերականութեան աշխարհաբար լեզուին Հայոց, աշխատասիրութեամբ Տեառն Մխիթար Հայոց, վարդապետի Սեբաստացւոյ Արբահայր բայ վարդապետի Սեբաստացւոյ Արբահայր կոչեցելոյ··· յամի տեառն 1727, ի Վենետիկ։
2. Քերականութիւն հայկազեան լեզուի, յօրինեալ ի Հ· Միքայէլ վարդապետէ Զամչեանց, Վենետիկ, 1779։ Քերականութիւն հայկական, համառօտ կարգեալ, Հ· Գարբիելի Աւետիքեան, Վենետիկ, 1823։ Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, ի Հ· Արսենէ Կոմիտասայ Բագրատունւոյ, Վենետիկ, 1852։
3. Գրացուցակ Մխիթարեան տպարանին (1717–1960), Վենետիկ, 1960, էջ 71–73։ Տեղի սղութեան պատճառով զանց ենք առնում տողատակ նշել քննարկուող բոլոր հրատարակութիւնները։ Ընթերցողը նշուած գրացուցակում ու մատենագիտական արդէն լոյս տեսած երկերում գրանց եւ Մխիթարեանների միւս բոլոր երկերի մասին կը գտնի մատենագիտական լայն տեղեկութիւններ։

© National Library of Armenia

Բառարանագրութիւնը վենետիկեան Մխիթարեանների գիտական գործունէութեան թերեւս ամենալիարժէք օղակն է: Գիտահետազօտական շատ մեծ աշխատանք ու հմտութիւն են ներդրել նրանք այս մեծ գործում, հրապարակ հանելով մասնաւորապէս «Հայկազեան» բառարանը[4], որը ոչ միայն հայկական, այլեւ համաշխարհային բառարանագրութեան եզակի երեւոյթներից մէկն է: Ցիշեալ աշխատութիւնը գլուխ բերելու համար՝ Մ. Սեբաստացին եւ իր օգնականները հարկադրուած են եղել պեղել մեր ողջ մատենագրութիւնը, տպագիր եւ ձրչագիր անհամար մատեանները, փաստագրերը, հնարաւորին չափ քաղուածքներ անել ժամանակակից խօսակցական լեզուից, համեմատել եւ ճշգրտել են ամէն մի բառի այս կամ այն իմաստային կիրառութիւնը՝ դարերի ընթացքում: Նրանք չեն գոհացել բառի միայն ամենաճշգրիտ իմաստը նշելով, այլեւ բերել են բազմաթիւ նմոյշներ՝ բնորոշ բառակապակցութիւնների մէջ, որպէսզի ընթերցողին մատչելի լինեն նրան իմաստային ու կիրառական տարբեր երանգները եւ դարաւոր պատմութիւնը: Սա գիտական շատ կարեւոր առաւելութիւն եւ նորութիւն էր տուեալ բնագաւառում:

Մխիթար Սեբաստացու բառարանը, հարկաւ, ունի թերութիւններ, որոնք պայմանաւորուած են մի շարք առարկայական պատճառներով եւ ժամանակի գիտական մտքի զարգացման աստիճանով: Դրանք նկատւում են դեռեւս Մ. Սեբաստացու սաների կողմից, որոնք ձեռնարկում են մի նոր բառարան («Նոր բառգիրք Հայկազեան լեզուի») կազմելու եւ հրատարակելու գործին: Մի անգամ եւս ամենայն բծախնդրութեամբ պեղւում են ողջ հայ մատենագրութիւնը, Մ. Սեբաստացուն եւ գործակիցներին անյայտ ըկզբնաղբիւրներն ու ձրչագրերը: Նոր բառարանում կատարւում են բազմաթիւ լրացումներ. զգալի չափով աճում է բառակազմը, առաւել ճշգրտութեամբ տարբերակւում են համանուն եւ հոմանիշ բառերը, նրանց իմաստները, բերւում են բառակապակցութիւնների նոր ու բազմազան նմոյշներ, կատարելագործւում է գիտա-հետազօտական կողմը: Նոր բառարանը, բարձրանալով նախորդի ընդհանուր հիմքի ու փորձի վրայ, բոլորովին էլ նրա կրկնութիւնը չէ, այլ իր հարըստացուած բառակազմով ու դիւրամատչելի գործնականութեամբ՝ նշանակալից երեւոյթ է հայ բառարանագրութեան մէջ[5]: Արժէքաւոր ներդրում է նաեւ Հ. Մ. Աւգերեանի «Առձեռն» բառարանը[6]:

Մեծ է Մխիթարեանների երախտիքը հայերէն-օտար լեզուների բառարաններ կազմելու գործում: Հայոց եւ օտար լեզուների խոր իմացութիւնը լայն հնարաւորութիւն է ընձեռել նրանց այդ խնդրում: Հ. Մ. Ջախջախեանի հայերէն-իտալերէն, Հ. Յ. Աւգերեանի ֆրանսերէն-հայերէն, հայերէն-ֆրանսերէն, անգլերէն-հայերէն, հայերէն անգլերէն, գերմաներէն-հայերէն, յունարէն-հայերէն (վերջին երկուսը, ինչքան մեզ յայտնի է, դեռեւս անտիպ են) եւ այլոց այս կարգի բառարանները[7] շատ են սատարել հայագիտութիւնն ու հայ ժողովրդին եւրոպական գիտութեանն ու մշակոյթին մերձեցնելու գործին:

Կարեւոր իրադարձութիւն էին նաեւ Հ. Մ. Քալֆունու «Բառգիրք արուեստից եւ գիտութեանց», Հ. Մ. Մաղաք-Թէոփիլեանցի «Վարք երեւելի արանց», Հ. Մ. Բժշկեանի «Նկարագիր վարուց երեւելի արանց», Հ. Ի. Խաչատուրեանի «Բառգիրք յատուկ անուանց արտաքոյ սուրբ Գրոց՝ եղելոց ի գիրս Հայոց», Հ. Զ. Ալեքսանեանի «Բառգիրք յատուկ անուանց Աստուածաշունչ գրոց», Հ. Ս. Երեմեանի «Բառգիրք գործնական գիտութեանց», Հ. Մ. Պոտուրեանի «Հայ Հանրագիտակ» բառարանները[8], որոնք նոյնպէս բերել ու բերում են իրենց կարեւոր նպաստը ազգային եւ համաշխարհային գիտութեան, արուեստի եւ մշակոյթի նուաճումները հայ ժողովրդին ներկայացնելու խնդրում:

* * *

Բերականագիտական ու բառարանագրական աշխատանքներից բացի, որոնք վերաբերում են ե՛ւ գրաբար, ե՛ւ աշխարհաբար հայերէնին, Մխիթարեանները կազմել ու հրատարակել են դասագրքեր[9]: Դպրոցական բաւական լայն ցանց ունենալով, նրանք գործնական ուսուցմամբ նշանակալից դեր են կատարել դասագրքերի մշակման գործում:

Գրաբարի եւ աշխարհաբարի յայտնի առեղծուածը՝ լուրջ մտահոգութիւնների եւ գործարար քննարկումների կարեւոր հարց է հանդիսացել նաեւ Մխիթարեանների համար: Քաջ յայտնի է նրանց հիմնական դիրքաւորումը այս կապակցութեամբ. մշտապէս նախապատուութիւնը վերապահելով դասական գրաբարին, մեծ դժուարութեամբ ու ափսոսանքով են հաշտուել նրա ասպարէզից խպտառ հեռանալու անխուսափելի իրողութեան հետ: Նրանց այդ դիրքը բացատրելի ու հասկանալի է: Սակայն անպայման հարկ է տեսնել ու նշել, որ նրանք թէեւ տեսական գրականութեան մէջ հիմնականում «գրաբարեանական» են եղել, բայց գործնականում ժողովրդին հասկանալի լինելու սկզբունքն են կիրառել հնարաւոր առաւելագոյն չափով եւ գործնական եռանդուն աշխատանք կատարել՝ աշխարհաբարը առաւել կենսունակ, կարող, հարուստ ու ճշգրիտ դարձնելու համար: Մ. Սեբաստացու հայագիտական գործունէութեան առաջին քայլը եղել է աշխարհաբարի քերականութիւնը: Մխիթարեանները առաջիններից էին, որ աշխարհաբարի գրաւոր կիրառութիւն սկսեցին: Աշխարհաբար առաջին թերթերը, ինչպէս կը տեսնենք ստորեւ, Մխիթարեաններն են լոյս ընծայել դեռեւս ԺԹ. դարի առաջին տասնամեակներին: Քաջ յայտնի է մեծանուն Հ. Ղ. Ալիշանի երախտիքն ու դերը աշխարհաբար լեզուն գեղարուեստական գրականութեան լեզու դարձնելու շնորհակալ գործում: Այս տեսանկիւնից նուազ գնահատելի չեն նաեւ միւս Մխիթարեանների աշխարհաբար սեփական ստեղծագործութիւններն ու թարգմանաբար հրատարակած երկերը: Ցայտնի է, որ Մխիթարեանների ոչ կրօնաւոր սաները (Մ. Պէշիկթաշլեան, Թ. Թերզեան եւ ուրիշներ) կարեւոր նպաստ են բերել այս բնագաւառում:

Մխիթարեանների կրթական-մանկավարժական գործունէութիւնը մշակութային-լուսաւորական որոշակի դեր է կատարել յատկապէս արեւմտահայ եւ գաղութահայ իրականութեան մէջ: Բացի երբեմնի Մուրատեան եւ Ռափայէլեան, ապա Մուրատ-Ռափայէլեան վարժարաններից, Մխիթարեանները դպրոցներ են հիմնում արեւմտեան Հայաստանում, Թուրքիայում, Տրանսիլվանիայում, Սիւրիայում եւ Եգիպտոսում: Նրանց աճեցրած սաներից են Մ. Պէշիկթաշլեանը, Թ. Թերզեանը, Մ. Մամուրեանը, Ս. Հեքիմեանը, Ծերենցը, Դ. Վարուժանը, Ա. Արփիարեանը, Վ. Փափազեանը եւ ուրիշներ, որոնք հայ գրականութեան ու մշակոյթի անուանի մշակներն են դարձել:

* * *

Սակայն հայ ժողովրդի լուսաւորութեանն ու մտաւոր զարգացմանը նաեւ գործնականօրէն սատարելու համար՝ Մխիթարեանները չեն գոհանում միայն

4. Բառգիրք Հայկազեան լեզուի, արարեալ ի Մխիթարայ վարդապետէ Սեբաստացւոյ Աբրահամայր կոչեցելոյ, աշխատակցութեամբ աշակերտաց իւրոց, հատ. Ա, Վենետիկ, 1749, հատ. Բ, Վենետիկ, 1769:

5. Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, երկասիրութիւն երից վարդապետաց, Հ. Գաբրիէլի Աւետիքեան, Հ. Խաչատրոյ Սիւրմէլեան, Հ. Մկրտչի Աւգերեան, հատ. առաջին, Ա-Կ, Վենետիկ, 1836, հատ. երկրորդ, Հ-Ֆ, Վենետիկ, 1837:

6. Հ. Մ. ԱՒԳԵՐԵԱՆ, Առձեռն բառարան Հայկազեան լեզուի, Վենետիկ, 1846:

7. Հ. Գ. ՉԱՐԲՀԱՆԱԼԵԱՆ, Հայկական մատենագիտութիւն, Վենետիկ, 1883, էջ 90–97:

8. Տե՛ս նշուած գրացուցակը, էջ 62, նաեւ Մխիթարեան յոբելեան (1701–1901), Վենետիկ, 1901 («Բազմավէպ»ի բացառիկը), էջ 217:

9. Տե՛ս նշ. գրացուցակը, էջ 61–73:

© National Library of Armenia

կրթական–մանկավարժական գործունէութեամբ: Նրանք փորձում են հայ ընթերցողին հասցնել ժամանակակից գիտութեան բոլոր նորութիւններն ու նուաճումները: Առանձին ուսումնասիրութիւնների եւ իրենց մամուլի մէջ բազմաթիւ էջեր են նուիրում բնագիտական, քիմիական, երկրաբանական, բուսաբանական, թռչաբանական, բժշկագիտական, աստղաբաշխական, մեքենագիտական եւ բնական այլ գիտութիւնների կարեւոր խնդիրներին[10]: Բարձր գնահատելով «փորձառական գիտութիւնները», ամէն կերպ ջանացել են դրանք կիրառութեան դնել զանազան գործառնութիւնների ու կենցաղի մէջ: Այս միեւնոյն մտահոգութիւնն է շարժառիթ հանդիսացել նրանց համար, որպէսզի մասնաւոր ուսումնասիրութիւններ նուիրեն ոչ միայն երկրագործութեանը, շերամապահութեանը, մեղուաբուծութեանը, այգեգործութեանը, անասնաբուծութեանը, թռչնաբուծութեանը, այլեւ ֆիզիկային, քիմիային, մեքենագիտութեանը, ճարտարարուեստին և այլն[11]: Հարկ է նշել, որ նրանք չարունակաբար նորոգել են այս բնագաւառի իրենց հետազօտութիւնները՝ գիտութեան նորագոյն նուաճումների համեմատ եւ ըստ այդմ էլ հանդէս եկել նորանոր հրատարակութիւններով: Մխիթարեան միաբան Հ. Մ. Աղաչրաղեանը բնական գիտութիւնների վերաբերեալ ոչ միայն գրքեր է հեղինակել, այլեւ Կ. Պոլսում աշխատանոցներ է հիմնել, կազմել է հանքանիւթերի հաւաքածուներ: Նա միաժամանակ գիւտարար էր, իսկ նրա գիտական փորձերը գնահատուել են եւրոպական գիտնականների կողմից: Նա զանազան պատուաւոր տիտղոսների եւ չքանշանների է արժանացել մի քանի պետութիւնների կողմից:

Նշանաւոր դէմքեր են նաեւ Հ. Մ. Քաջունին, Հ. Վ. Յովսէփեանը, Հ. Օ. Գուրգէնեանը, Հ. Հ. Պապիկեանը, Հ. Ս. Երեմեանը եւ ուրիշներ, որոնք նոյնպէս հանդէս են եկել այս բնագաւառի կարեւոր աշխատութիւններով: Դարվինիզմի վերաբերեալ ուշագրաւ մենագրութիւն է հրատարակել Հ. Ս. Երեմեանը[12]: Հայաստանի բուսականութեամբ, կենդանիներով եւ հանքային հարստութիւններով հետաքրքրուողը շատ օգտակար նիւթ կը գտնի նրանց համապատասխան ուսումնասիրութիւնների մէջ: Մխիթարեանների պարբերական մամուլը, որի մասին խօսք կը լինի ստորեւ, նոյնպէս շատ առատ նիւթ է բովանդակում վերոյիշեալ գիտութիւնների կարեւոր նորութիւնների եւ նուաճումների մասին:

* * *

Ոչ նուազ արդիւնաւէտ եւ օգտակար գործ են կատարել նաեւ Մխիթարեան աշխարհագիրները: Նրանց տեսադաշտում ոչ միայն Հայաստանն է, այլև երկրագնդի բոլոր ցամաքամասերը: Ագոնցի «Աշխարհագրութիւնը» (որի առաջին հատորը շարադրել է Հ. Ղ. Ինճիճեանը) իր ժամանակի աշխարհագրութեան կարեւոր նուաճումներից մէկն է: Այնտեղ գրեթէ բոլոր երկրների մասին հանգամանօրէն պատմւում է այն ամէնը, ինչը առ այդ յայտնի էր գիտական աշխարհին[13]: Հարուստ եւ արժէքաւոր է նաեւ Հ. Ղ. Ալիշանի «Քաղաքական աշխարհագրութիւն» ձեռնարկը[14]: «Աշխարհագրութիւն քաղաքական, ուսումնական եւ բնական» գործի մէջ Հ. Ս. Եազըճեանը և «Տարերք աշխարհագրութեան» գրքի մէջ Հ. Դ. Ստեփանեանը վերստին տալիս են մայր ցամաքների աշխարհագրութիւնը՝ աւելի սիստեմաւորուած, լրացուած նոր տեղեկութիւններով եւ գիտա–տեսական գիտողութիւններով[15]:

10· *Տե՛ս նշուած* Գրացուցակը, էջ 62–82:

11· *Տե՛ս նշ.* Գրացուցակը, էջ 62–82:

12· *Նոյն տեղում*, էջ 89:

13· Ս. ԱԳՈՆՑ, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, *հատ.* Ա–ԺԱ, *Վենետիկ*, 1802–1806:

14· Քաղաքական աշխարհագրութիւն, նորակառոյց պատկերօք, *հաւաքեաց Հ. Ղեւոնդ Ալիշանեան*, *Վենետիկ*, 1853:

15· Հ. Ս. ԵԱԶԸՃԵԱՆ, Աշխարհագրութիւն քաղաքական, ուսումնական եւ բնական, *Վենետիկ*, 1885: Հ. Դ. ՍՏԵՓԱՆԵԱՆ, Տարերք աշխարհագրութեան, *Վենետիկ*, 1900:

Սակայն այս բնագաւառում Մխիթարեանների մեծագոյն ներդրումը եղել ու մնում են Հայաստանի պատմա–քաղաքական, տնտեսական ու ֆիզիկական աշխարհագրութեան եւ ազգագրութեան վերաբերեալ բազմաթիւ մեծ ու փոքր աշխատութիւններն ու յօդուածները: Այս կապակցութեամբ՝ նախապատուութիւնը, պակցութեամբ՝ նախապատուութիւնը, պակցութեամբ՝ նախապատուութիւնը, պէտք է տալ Հ. Ղ. Ինճիճեանին: Ս. Ագոնցի վերոյիշեալ աշխատութեան առաջին ընդարձակ հատորում նա ամենայն մանրամասնութեամբ ներկայացնում է պատմական Հայաստանը՝ տուեալ ժամանակի դրութեամբ[16]: Սոյն աշխատութիւնը փաստական նիւթի (հնարաւոր վրիպումներով հանդերձ) հարուստ չտեմարան է եւ, անկասկած, ունի պատմա–աշխարհագրական կարեւոր արժէք: Հայաստանի եւ նրա աշխարհագրութեան վերաբերեալ իր միւս հանրայայտ աշխատութիւններում[17] նա նաեւ խօսում է կարեւոր պատմա–քաղաքական անցուդարձերի, Հայաստանի վարչաձեւերի, նախարարական տների, նրանց իրաւական դրութեան, հայ ժողովրդի բարքերի ու սովորոյթների, զրաղմունքի, հաւատալիքների եւ այն ամէն յատկանշականի մասին, որն առընչւում է Հայաստանին եւ նրա բնակչութեանը:

Մեծ է նաեւ Հ. Ղ. Ալիշանի նպաստը այս խնդրում: «Բնախօսութիւն Հայաստանի», «Տեղագիր Հայոց Մեծաց» եւ «Նշմարք հայկականք»[18] երկերից բացի, պատմա–աշխարհագրական խոշոր ներդրում են նրա «Սիսուան», «Շիրակ», «Այրարատ», «Սիսական» ստուար հատորները[19]: Մեծաջան հետազօտական աշխատանքի եւ խոր հմտութեան շնորհիւ հեղինակը կազմել է համանուն դաւառների մանրամասն տեղագրութիւնը, խօսել է նրանց բուսական ու կենդանական աշխարհի մասին, նշել կարեւոր վարչական, կրօնական, մշակութային, կենտրոնները, իր հմտական գծերով ներկայացրել Հայաստանի քաղաքական պատմութիւնը:

Տեղագրական հետաքրքիր աշխատութիւն է նաեւ Հ. Ն. Սարգիսեանի «Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս» ուղղագրական երկը[20]: Այստեղ, բացի աշխարհագրական տեղեկութիւններից, արժէքաւոր է վիմագիր արձանագրութիւնների բաւական մեծ հաւաքածուն: Հայաստանի աշխարհագրութեանն են վերաբերում նաեւ Հ. Մ. Քաջունու մի քանի աշխատութիւնները, որոնք որպէս ուսումնական ձեռնարկ՝ շատ օգտակար են եղել[21]: Այս բնագաւառի ամենաարժէքաւոր ուսումնասիրութիւններից է Հ. Ս. Էփրիկեանի հանրայայտ «Պատկերազարդ էփրիկեանի հանրայայտ «Պատկերազարդ բնաշխարհիկ բառարանը»[22]: Հայաստանի վերաբերեալ տեղագրական բնոյթի բազմաթիւ յօդուածներ լոյս են տեսել «Բազմավէպում», վերոյիշեալ աշխատութիւններից մի քանիսը նախապէս տպագրուել են այնտեղ:

Մխիթարեանները հրատարակել են նաեւ հայերէն աշխարհագրական բնագրեր: Հ. Ա. Սուքրեանը լոյս է ընծայել Է. դարի «Աշխարհացոյցը»՝ ֆրանսերէն թարգմանութեամբ հանդերձ[23]: Թէեւ հրատարա-

---

16· *Տե՛ս* Ս. ԱԳՈՆՑ, *նշ. աշխ.*, *հատ.* Ա, *Վենետիկ*, 1802:

17· Ստորագրութիւն Հայաստանեայց, *Հ. Ղուկաս Վարդապետի Ինճիճեան*, *Վենետիկ*, 1822: Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, *Հ. Ղուկաս Աթոռակալ Վարդապետի Ինճիճեան*, *հատ.* Ա, Բ, Գ, *Վենետիկ*, 1835:

18· Հ. Գ. ԶԱՐԲՀԱՆԱԼԵԱՆ, *նշ. աշխ.*, էջ 115, 665, 500:

19· Հայկական նոր մատենագիտութիւն եւ հանրագիտարան հայ կեանքի, *կազմեց Հ. Արսէն Ղազարոս Ղազիկեան*, *հատ. առաջին*, Ա–Մ, *Վենետիկ*, 1909–1912, էջ 38–58:

20· Հ. Ն. ՍԱՐԳԻՍԵԱՆ, *նշ. աշխ.*, *Վենետիկ*, 1864:

21· Հնախօսութիւն Հայաստանի ի պէտս դպրոցաց, *ի Հ. Մանուէլէ Մխիթարեան վարդապետէ Քաջունւոյ*, *Վենետիկ*, 1855: Աշխարհագրութիւն հին եւ նոր Հայաստանեաց, *Հ. Մանուէլ վարդապետ Քաջունի*, *Վենետիկ*, 1857:

22· Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, *աշխատասիրեց Հ. Ս. Էփրիկեան*, *հատ.* Ա, Ա–Ը, *Վենետիկ*, 1902, *հատ.* Բ, Թ–Կ, 1907:

23· Հ. Ա. ՍՈՒՔՐԵԱՆ, Աշխարհացոյց Մովսէսի Խորենացւոյ, *Վենետիկ*, 1881:

© National Library of Armenia

կիչը իրաւացի չէ, երբ յիշեալ աշխատութիւնը համարում է Պողոմէոսի «Աշխարհագրութեան» համառօտագրութիւնը, բայց նրա թարգմանութիւնը եւ հրատարակութիւնը ինքնին արժէքաւոր ձեռնարկում է:

Քարտէզագրութիւնը նոյնպէս Մխիթարեանների գործունէութեան կարեւոր օղակներից է: Ճիշտ է, դեռեւս 1665 թ. Ամստերդամում հրատարակուած «Համառարած Աշխարհացոյցը» մինչեւ այսօր էլ աշխարհագէտներին հիացնում է, բայց հայ քարտէզագրութիւնը իր յաջողութիւններով պարտական է վենետիկեան (նաեւ՝ Վիեննայի)[24] Մխիթարեաններին: Նրանք հարիւրաւոր քարտէզներ են հրատարակել՝ զանազան չափերի ու բնոյթի: Դրանցից մի քանիսը մրցանակների են արժանացել Փարիզի, Լոնդոնի, Ամստերդամի, Բերլինի ցուցահանդէսներում[25]:

* * *

Շատ մեծ ընդգրկում ունի Մխիթարեանների թարգմանչական գործունէութիւնը: Նրանք իրենց տեսադաշտում ունեցել են համաշխարհային գրականութեան ու գիտութեան խոշորագոյն ներկայացուցիչների երկերը: ԺԸ–ԺԹ դարերի հայ թարգմանական գրականութեան առաւելագոյն բաժինը նրանց աշխատանքի արդասիքն է: Եթէ միայն թուարկելու լինենք թարգմանուած երկերի անունները, չենք կարող չպատկառել նրանց հսկայական աշխատանքից: Նշենք դրանցից միայն մի քանիսը: Օրինաչափ երեւոյթ է, իհարկէ, որ կրօնա-եկեղեցական երկերից յետոյ՝ Մխիթարեանները սկսում են թարգմանել հին աշխարհի գրական կոթողները: Հոմերոսի երկու աշխարհահռչակ գործերն էլ նրանց կողմից թարգմանուել են մի քանի անգամ: Հ. Ե. Թոմաճեանը (երբեմն՝ Թոմաճան) կատարում է «Իլիականի» առաջին թարգմանութիւնը 1843 թ., Հ. Ա. Բագրատունին՝ երկրորդը 1864 թ., իսկ երրորդը՝ Հ. Ա. Ղազիկեանը 1911 թ.: Առաջին երկուսը գրաբար են (ի դէպ, Մխիթարեանների թարգմանութիւնների մեծագոյն մասը գրաբար է), իսկ վերջինը՝ աշխարհաբար[26]: «Ոդիսականը» ունի երկու թարգմանութիւն, առաջինը 1848 թ., Հ. Ե. Թոմաճեանի եւ երկրորդը՝ 1924 թ., Հ. Ա. Ղազիկեանի[27]:

Յոյն ողբերգակներից Սոփոկլէսի եւ Եւրիպիդէսի ողբերգութիւնների թարգմանութեամբ հանդէս են գալիս Հ. Ա. Բագրատունին, Հ. Ա. Սուքրեանը, Հ. Ա. Ղազիկեանը[28], Եզոբոսի առակները թարգմանուում են Հ. Մ. Բժշկեանի կողմից դեռեւս 1818 թ. (հրատարակուել է մի քանի անգամ)[29]: Յունական փիլիսոփաներից թարգմանուում են Պղատոնի, Թէոկրիտէսի, պատմագիրներից՝ Թուկիդիտէսի, Պլուտարքոսի, ճարտասաննե-

24· Մենք սոյն յօդուածում, հասկանալի պատճառով, ընդհանրապէս չենք խօսում Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան գործունէութեան մասին:

25· Զ· ԽԱՆԶԱՏԵԱՆ, Հայաստանի աշխարհագրութիւնը Մխիթարեանց գրականութեան մէջ, «Գեղունի», 1950, էջ 210:

26· Հոմերոսի Եղիական, թարգմանեաց ի հելլենական Հ. Եղիա Վ. Թոմաճեան, Վենետիկ, 1843: Հոմերի Իլիական, հան ի հայ Հ. Արսէն Կ. Բագրատունի, Վենետիկ, 1864: Հոմերի Իլիական, բնագրէն (աշխարհաբար) թարգմանեց Հ. Արսէն Ղազարոս Ղազիկեան, Վենետիկ, 1911:

27· Հոմերոսի Ոդիսական, թարգմանեաց ի հելլենական Հ. Եղիա Վ. Թոմաճեան, Վենետիկ, 1848: Նոյնը Հ. Արսէն Ղազիկեանի թարգմանութեամբ, Վենետիկ, 1924:

28· Ճաշակ հին եւ նոր ողբերգութեանց··· ի հելլենաց եւ յարդեաց, թարգմանեալք յիւրաքանչիւր բնագրացն ի ձեռն Հ. Արսենի Կոմիտասայ Բագրատունւոյ, Վենետիկ, 1869: Եւրիպիդէս, Աղերսաւորք, զոր ի հելլէն բնագրէ փոխեաց ի մերս Հ. Արսէն Սուքրի, Վենետիկ, 1871: Սոփոկլէս, Իդիպոս թագաւոր (աշխարհաբար, թարգմ. Հ. Ա. Ղազիկեանի), Վենետիկ, 1928:

29· Առակք Եզովպոսի, թարգմանեալ յաշխարհաբար լեզու··· ի Հ. Մինաս վարդապետէ Բժշկեան, Վենետիկ, 1818:

րից՝ Եսքինէսի ու Դեմոսթենէսի երկերը[30]:

Հռոմէական գրականութեան ամենակարկառուն դէմքերից Վիրգիլիոսի երկերը եւս եղել են Մխիթարեան թարգմանիչների ուշադրութեան կենտրոնում: Նրա «Ենէականը» առաջին անգամ թարգմանուել է 1845 թ. Հ. Ե. Հիւրմիւզեանի կողմից: Երկրորդ անգամ դարձեալ միեւնոյն թարգմանիչն է այն «հայկական չափով» թարգմանում, իսկ աշխարհաբար թարգմանութիւնը կատարում է Հ. Ա. Ղազիկեանը: «Հովուականքը» (Bucolica) եւս յիշեալ երկու թարգմանիչներն են թարգմանում: «Մշակականքը» (Georgica) եւ Որատիոսի «Ars poetica»ն, որը Բուալոյի համանուն երկի հետ՝ դասականութեան յայտարարն էր հանդիսանում, առաջին անգամ թարգմանուում է Հ. Ա. Բագրատունու, իսկ երկրորդ անգամ՝ Հ. Ա. Ղազիկեանի կողմից[31]: Թարգմանուում են նաեւ Կիկերոնի, Յ. Կեսարի, Սալուստիոսի, Մարկոս Աւրելիոսի, Սենեկայի, Փեդրոսի, Տակիտոսի եւ այլոց գործեր: Հռչակաւոր երկերը[32]: Իտալացի առաւել հռչակաւոր երկերը՝ մեծանուն բանաստեղծ Տանթէի «Աստուածային կատակերգութիւնը» նախապէս հատուածաբար թարգմանուում է Հ. Դ. Նազարէթեանի, ապա ամբողջապէս՝ Հ. Ա. Ղազիկեանի կողմից: Հ. Ա. Տիրոյեանը եւս 1930 թ. թարգմանում է «Արքայութիւն» մասը[33]:

Եւրոպական դասականի եւ ռոմանտիզմի ներկայացուցիչներից Ռասինի, Կոռնելի, Վոլտերի, Ալֆիէրիի, Տասսոյի, Ֆենելոնի, Միլտոնի, Լամարտինի, Բայրոնի, Շիլլերի, Գոլդսմիթի, Տենիսոնի, Լէոպարդիի, Ջիակոզայի, Գեսների, Գոպէի, Ֆոսկոլոյի, Սենկեւիչի եւ մի քանի այլ հեղինակների ընտիր երկերի դրաբար եւ աշխարհաբար թարգմանութեամբ հանդէս են գալիս Մխիթարեան թարգմանիչներից շատերը[34]: Շեքսպիրի «Հենրի Ը.» (թերի) եւ «Մակբեթ» ողբերգութիւնները թարգմանուում են Հ. Ա. Կասկանդիլեանի կողմից եւ հրապարակւում «Բազմավէպի»մէջ[35]: Բիչեր Ստոուի «Աղբար Թոմասի տնակը» Հ. Գ. Մէրճանեանը թարգմանում եւ հրատարակում է դեռեւս 1854 թ.[36]: Հ. Ֆ. Քուշներեանը թարգմանութիւններ է կատարում Պուշկինի, Կրիլովի, Նեկրասովի, Շեւչենկոյի երկերից[37]: Մխիթարեանները թարգմանում են նաեւ գիտական, պատմական, աշխարհագրական եւ արուեստագիտական մի շարք այլ երկեր:

Անհրաժեշտ է նշել, որ նրանք հսկայական աշխատանք են կատարում միաժամանակ հայ մատենագրութիւնը օտարներին թարգմանաբար ծանօթացնելու գործում: Իտալերէն թարգմանուում են Ագաթանգեղոսի ու Մովսէս Խորենացու Պատմութիւնները, Գ. Նարեկացու Աստուածածնին նուիրուած ներբողը, Լամբրոնացու «Ատենաբանութիւնը»· Ֆրանսերէն՝ Եղիշէի ու Փարպեցու երկերը, Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» երկը, «Աշխարհացոյցը»· լատիներէն՝ հայկական շարականներ, Յովհան Օձնեցու ճառերը: Այս բոլորից բացի նրանք հայերէնից լատիներէնի են թարգմանում նաեւ մի քանի այլ աշխատութիւններ, որոնք եբրայերէն կամ յունարէն բնագրերից վաղուց էին թարգմանուել հայերէնի եւ որոնց սկզբնագիր բնագրերը կորել եւ միայն հայերէն թարգմանութիւններն էին մնացել: Դրանցից են Եւսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնը» և Փիլոնի ճառերը, որոնք թարգմանուում են Հ. Մ. Աւգերեանի կողմից եւ հրատարակւում 1818 եւ 1822 թուականներին:

Վերոյիշեալ թարգմանութիւնների մի մասը, ինչպէս եւ շատ այլ թարգմանա-

30· Գրացուցակ Մխիթարեան տպարանի, էջ 57, 58, 52–53, 55, 60:

31· Նոյն տեղում, էջ 51, 52, 55, 56:

32· Նշ· Գրացուցակը, էջ 55, 56, 58, 53, 50, 51, 60:

33· Նոյն տեղում, էջ 54, 50:

34· Նոյն տեղում, էջ 36–60:

35· «Բազմավէպ», 1877, էջ 124, 339· 1878, էջ 69, 174, 273, 325:

36· Նշ· Գրացուցակը, էջ 36:

37· Նոյն տեղում, էջ 36:

© National Library of Armenia

կան գործեր, նախապէս հրատարակուել են «Բազմավէպ»ում:

* * *

Վենետիկեան Մխիթարեանները նուազ երախտիք չունեն հայ պարբերական մամուլի պատմութեան մէջ: Այս բնագաւառում եւս նրանք առաջիններից են:

Հայերէն առաջին պարբերականի՝ Մադրասի «Աղդարարի» հրատարակութիւնից միայն հինգ տարի յետոյ լոյս է ընծայւում երկրորդը՝ Վենետիկեան Մխիթարեանների «Տարեգրութիւնը»՝ Հ· Ղ· Ինճիճեանի խմբագրութեամբ: Այն վկայութիւնը, թէ դա է «յիշատակարան քաղաքական, պատերազմական, եկեղեցական եւ բանասիրական անցից եւ դիպուածոց աշխարհի», ինքնին հաստատումն է այն հիմնական բովանդակութեան եւ ուղղութեան, որն ունեցել եւ որին հետեւել է «Տարեգրութիւնը» 1799–1802 թթ· ընթացքում[38]: «Եղանակ Բիւզանդեան, Բազմավէպը» Մխիթարեանների յաջորդ պարբերականն է, որը սկսել է հրատարակուել 1803 թ· եւ դադարել 1820 թ·[39]: Միաժամանակ 1812 թ· «Արշարունեաց ընկերութեան» (Կ· Պոլսում կազմակերպուած) խնդրանքով՝ Մխիթարեանները հրապարակ են հանում «Դիտակ Բիւզանդեան» պարբերաթերթը, որը «Տարեգրութեան» հարազատ երկուորեակն էր[40]: Ուշադրաւ է, որ այս երեք թերթերն էլ աշխարհաբարով էին լոյս տեսնում: Սրանցով նախապատրաստւում էր «Բազմավէպի» երեւան գալը, որի առաջին համարը հրատարակւում է 1843 թ· եւ ապա անընդմէջ լոյս ընծայւում առ այսօր[41]: Այն ամենաերկարակեաց հայերէն պարբերականն է եւ հնագոյններից մէկը ամբողջ աշխարհում: «Բազմավէպը» գիտական, գրական, պատմա–բանասիրական հանդէս է: Այն սկզբնական շրջանում աւելի համեստ ծրագրերի էր հետամտում, հետաքրքիր եւ օգտակար գիտելիքներ հաղորդում, ծաւալում էր բնական գիտութիւնները, տնտեսագիտական, առեւտրա–արհեստագործական, երկրագործական, բժշկական, աշխարհագրական եւ այլ օգտակար ակնարկներ հրապարակում: Աշխարհաբար լեզուի ընտրութիւնն ու հիմնականում այսպիսի բովանդակութիւնը պարզ ցոյց են տալիս առաջին խմբագիրների (Այվազովսկի, Ալիշան) «լուսաւորեալ ազգ» ունենալու որոշակի տրամադրութիւնը: Տարիների ընթացքում պարբերականը աստիճանաբար հասունանում է· Հայոց պատմութեան, հնագիտութեան, ազգագրութեան, մատենագրութեան, լեզուի, բանասիրութեան, ճարտարապետութեան, երաժշտութեան, բանահիւսութեան հարցերի շուրջ «Բազմավէպում» լոյս են տեսնում յօդուածներ եւ յօդուածաշարեր, որոնց գիտական արժէքն ու շահեկանութիւնը աներկբայելի են: Նրա տարբեր համարներում կարելի է բազմիցս հանդիպել Ագաթանգեղոսի, Բիւզանդի, Խորենացու, Եղիշէի, Փարպեցու, Մանդակունու, Օձնեցու, Նարեկացու, Արծրունու, Սարկաւագի, Կ· Երզնկացու, Յ· Երզնկացու, Աղթամարցու եւ մեր մատենագրութեան շատ ուրիշ յայտնի ու մինչ այդ անյայտ հեղինակների գրական գործունէութեանը առընչուող հարցերի պատմա–բանասիրական քննութեանը, որն այսօր էլ փաստական ու հետազօտական հարուստ նիւթ է տալիս հայագիտութեանը: Այս բնագաւառում առաւել ուշադրաւ յօդուածներ, երբեմն էլ յօդուածաշարեր (որոնք հետագայում լոյս են տեսել առանձին հատորներով) ստորագրել են Հ· Ղ· Ալիշանը, Հ· Յ· Թորոսեանը, Հ· Վ· Հացունին, Հ· Կ· Տէր–Սահակեանը, Հ· Աճառեանը, Կ· Բասմաճեանը, Հ· Բ· Սարգիսեանը, Հիւպշմանը, Հ· Ս· Էփրիկեանը, Հ· Ֆ· Զրաքեանը, Ն· Բիւզանդացին, Հ· Ն· Անդրիկեանը, Յ· Սանդալճեանը, Հ· Մ·

38· Տե՛ս Գ· ԼԵՒՈՆԵԱՆ, Հայոց պարբերական մամուլը, Երեւան, 1934, Ներածութիւն, էջ 19 եւ 3:

39· Նոյն տեղում, էջ 19, էջ 3:

40· Նոյն տեղում, էջ 19, էջ 4:

41· Նոյն տեղում, էջ 21, էջ 5:

Պոտուրեանը, Հ· Գ· Նահապետեանը, Հ· Ե· Փեչիկեանը, Հ· Գ· Սարգիսեանը, Հ· Ս· Երեմեանը, Հ· Վ· Յովհաննէսեանը, Յ· Քիւրտեանը եւ ուրիշներ:

Նոր եւ նորագոյն շրջանի հայ գրողների ստեղծագործութիւնների վերաբերեալ յօդուածները եւս կարեւոր տեղ են գրաւում «Բազմավէպի» տարբեր համարների մէջ: Այս մասին առաւել նշանակալից են Հ· Ս· Երեմեանի, Հ· Ֆ· Զրաքեանի, Ա· Արփիարեանի (Հրպետ), Հ· Ղ· Թիւլեանի, Հ· Մ· Ճանաչեանի եւ մի քանի այլ անուանի գրականագէտ – բանասէրների «Բազմավէպ»ում լոյս ընծայած յօդուածները: Այստեղ են տպագրուել Հ· Ս· Էփրիկեանի, Հ· Վ· Հացունու, Հ· Գ· Նահապետեանի, Վ· Թորգոմեանի, Ն· Զօրայեանի, Ա· Երեմեանի, Հ· Կ· Տէր–Սահակեանի, Հ· Ս· Երեմեանի, Թ· Թերզեանի եւ այլոց տեղագրական, տնտեսագիտական, ազգագրական, հայ բժշկութեան, ճարտարապետութեան, թատրոնի, երաժշտութեան, մանկավարժութեան, տաղաչափութեան եւ այսօրինակ այլ նիւթերի վերաբերեալ ուշագրաւ յօդուածաշարքերը:

Մեծ դեր է խաղացել «Բազմավէպ»ը՝ հանդէս գալով օտար ժողովուրդների գրականութեան, բանահիւսութեան, պատմութեան, մշակոյթի, կենցաղի վերաբերեալ առանձին երկերի թարգմանութեամբ, ուսումնասիրութիւններով և հաղորդումներով:

«Բազմավէպ»ը շատ էջեր է նուիրել հայ ժողովրդի հասարակական–քաղաքական կեանքին, անդրադարձել նրա ընկերային – ազատագրական շարժումների արդիական ներկայացուցիչների գործունէութեանը, Խորհրդային Հայաստանի կեանքին եւ սփիւռքահայ իրականութեանն առընչուող հարցերին:

* * *

Մխիթարեանների հայագիտական գործունէութեան ամենաերախտաշատ բնագաւառը, բառարանագրութեան հետ հաղաւառը, բառարանագրութեան հետ հաղաւառը, նրանց պատմա – բանասիրական մատեղ, նրանց աշխատանքն է: Այս ասպարէզում նրանց կատարած բոլոր գործերն ընդգրկել մէկ յօդուածում անհնար է· ուստի մենք համառօտակի կ'անդրադառնանք Մխիթարեանների միայն մի քանի առաւել ակնառու եւ արժէքաւոր երկասիրութիւններին:

Առաջին մեծավաստակ երախտաւորը այս բնագաւառում, անտարակոյս, Հ· Մ· Զամչեանն է: Նրա երեք հատորանոց «Հայոց պատմութիւնը»[42] հայ ժողովրդի դարերի պատմա–քաղաքական, ընկերային–տնտեսական, մշակութային, գրական, գիտական, կրօնա–եկեղեցական կեանքի առաջին անգամ ամբողջացուած պատմութիւնն է: Նրա հեղինակը միայնակ պեղել է մեր ողջ մատենագրութիւնը, տպագիր ու ձեռագիր հազարաւոր սկզբնաղբիւրներ, գտնել, համադրել, խմաստաւորել ու գնահատել է տասնեակ հազարաւոր փաստեր: Նա մեծ թուով տեղագրական ճշտումներ է արել, ուսումնասիրել նաեւ բազմաթիւ օտար սկզբնաղբիւրներ: Բնական է, որ առանց վրիպումների նման մի վիթխարի ստեղծագործութիւն գլուխ բերել անհնար էր: Հ· Մ· Զամչեանի գրչին է պատկանում սոյն ընդարձակ աշխատութեան իւրովի համառօտագրութիւնը, աւելի շուտ՝ երկրորդ շարադրանքը, որը «Խրախճան պատմութեան Հայոց» անունն է ստացել[43]:

Պատմագիտական մեծ արժէք են ներկայացնում Հ· Ղ· Ալիշանի «Այրարատ», «Սիսուան», «Շիրակ», «Սիսական», «Հայապատում» ծաւալուն գործերը, որոնք անխոնջ հետազօտական աշխատանքի, տեղագրական, պատմա – քաղաքական, մատենագիտական, հնագիտական, ազգագրական անհամար փաստերի համա–

42· Պատմութիւն Հայոց, յօրինեալ ի Հ· Միքայէլ վարդապետէ Զամչեանց, հտ· Ա, Վենետիկ, 1784, հտ· Բ, Վենետիկ, 1785, հտ· Գ, Վենետիկ, 1786:

43· Խրախճան պատմութեան Հայոց, յօրինեալ ի Հ· Միքայէլ վարդապետէ Զամչեանց, Վենետիկ, 1811 (նոյնը նա կազմել եւ հրատարակել է նաեւ Թուրքերէն, նկատի ունենալով Թրքախօս Հայերին):

© National Library of Armenia

հաւաքի, վերլուծութեան ու գնահատութեան օրինակ են հանդիսանում։ Դրանք թէեւ կրում են առանձին դաւառների անուններ, բայց ընդգրկում են գրեթէ ողջ պատմական Հայաստանն ու Կիլիկիան եւ միաժամանակ համակողմանիօրէն լրացնում Հ. Մ. Զամչեանի «Հայոց պատմութիւնը»՝ նորայայտ վաւերագրերի եւ պատմական սկզբնաղբիւրների հիման վրայ։ Ցիշեալ երկերը ունեն ձեռագրական վկայութիւնների, վիմագրութիւնների, զանազան փաստագրերի նմանահանութիւններ, վայրերի եւ պատմական յուշարձանների բազմաթիւ նկարագրութիւններ։ Յատկապէս ազգագրական կարեւոր նիւթեր է պարունակում նրա «Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց» երկը։ Իր բնոյթով եւ պատմա-գիտական արժէքով եզակի է «Հայ բուսակը», որտեղ ամենայն մանրամասնութեամբ հետազօտուած է Հայաստանի բուսականութիւնը։ Հ. Ղ. Ալիշանի բնագրագիտական արժէքաւոր ներդրումն են «Սոփերք հայկականքի» հատորների, Կ. Գանձակեցու եւ Վ. Արեւելցու Պատմութիւնների հրատարակութիւնները[44]։ Բանասիրական հրմուտ աշխատանքի արդիւնք է նրա «Շընորհալի եւ պարագայ իւր» մենագրութիւնը։

Մխիթարեանների պատմա-բանասիրական գործունէութեան մէջ են ընդգրկւում նաեւ Հայաստանի վերաբերեալ պատմական, աշխարհագրական – տեղագրական, հնագիտական եւ ազգագրական բնոյթի շատ այլ երկեր, որոնցից մի քանիսի մասին արդէն խօսուեց։

* * *

Մեծ է Մխիթարեանների աւանդը նաեւ հայ գաղթօջախների, հայ եւ օտար ժողովուրդների փոխադարձ կապերի պատմութեան ուսումնասիրութեան գործում։ Այս կապակցութեամբ ուշադրութեան են արժանի առաւելապէս Հ. Մ. Բժշկեանի, Հ. Ղ. Ալիշանի, Հ. Բ. Քուշներեանի, Հ. Կ. Տէր-Սահակեանի եւ Հ. Յ. Աստուրեանի համապատասխան աշխատութիւնները։ Մխիթարեանները կազմել ու հրատարակել են նաեւ օտար ժողովուրդների պատմութեան վերաբերեալ արժէքաւոր ուսումնասիրութիւններ։

* * *

Հայ մատենագրութեան պատմութեան ուսումնասիրութիւնը Մխիթարեանների նշանակալից ծառայութիւններից է։ Ինչքան մեզ յայտնի է, հայ գրականութեան առաջին պատմութիւնը կազմել եւ հրատարակել է Մխիթարեան Հ. Ս. Սոմալեանը 1829 թ., իտալերէն[45]։ Այս հարցում ակնյայտ է անուանի գրականագէտ Հ. Գ. Զարբհանալեանի վաստակը։ Նա կարողացաւ շարադրել հայ մատենագրութեան առաւել կանոնաւոր եւ ամբողջական պատմութիւնը։ Քանի՞ ձեռագիր մատեաններ, վաւերագրեր, տպագիր սկզբնաղբիւրներ եւ ուսումնասիրութիւններ է քննութեան առել նա։ Բանասիրական ու գրականագիտական խոր հմտութեան շընորհիւ միայն կարող էին ճշտուել ու բացայայտուել բազմաթիւ հեղինակների ժամանակագրութիւնը, նրանց երկերի հեղինակային, տեսակային պատկանելութիւնը, գաղափարական եւ գեղարուեստական առանձնայատկութիւնները։ Հ. Գ. Զարբհանալեանն է հայ գրականութեան մէջ առաջին անգամ շարադրում յունա-հռոմէական, հին եւ միջին դարերի գրականութեան հայկական հին թարգմանութիւնների պատմութիւնը, հայկական մատենագիտութիւնը, հայ տպագրութեան պատմութիւնը, որոնցից իւրաքանչիւրը ինքնին մի լուրջ ուսումնասիրութիւն է[46]։

Այս բնագաւառում բազմակողմանի աշխատանք է տանում նաեւ Հ. Վ. Հացունին։ Նա ոչ միայն ուսումնասիրում է հայ մատենագրութեան առանձին յուշարձանները, այլեւ մշակութային եւ ազգագրական այնպիսի բնագաւառներ, ինչպիսիք են ուսումնական ու դաստիարակչական գործը, գրչագրութիւնը հին Հայաստանում, հայկական ծէսը, երգումը, դրօշները, տարազը, հայ կինը Հայոց պատմութեան մէջ եւ այլն։ Նրա երկերը գարձեալ աչքի են ընկնում փաստական նիւթի հարստութեամբ[47]։

Հ. Բ. Սարգիսեանի՝ Ագաթանգեղոսի Պատմութեանը, Մ. Խորենացու Պատմութեան աղբիւրներին, Հին Կտակարանի անվաւեր գրքերին, Յ. Մանդակունու Ճառերին, Անանունի Ժամանակագրութեանը, Անանիա Թարգմանչի ու Վ. Աթեանը, Անանիա Թարգմանչի ու Վ. Աթեանը, Անանիա Թարգմանչի ու Վ. Աթ

* * *

Հայ գեղարուեստական գրականութեան մշակման ու զարգացման գործում նոյնպէս գնահատութեան են արժանի Մխիթարեան հեղինակները։ Հայ նոր գրականութեան երկու գլխաւոր ուղղութիւնների՝ դասականութեան եւ ռոմանտիզմի պատմութիւնը սերտօրէն առընչւում է Մխիթարեան գործունէութեանը։ Դրանցից առաջինը ստեղծւում ու զարգանում է առաւելապէս Մխիթարեան հեղինակների ստեղծագործութիւններով՝ մասնաւորապէս եւրոպական դասականութեան անմիջական ներգործութեամբ։ Այս կապակցութեամբ առաջին հերթին յիշատակելի են Հ· Ղ· Ինճիճեանի, Հ· Գ· Աւետիքեանի, Հ· Մ· Ջախջախեանի, Հ· Ե· Թոմաճեանի, Հ· Ե· Հիւրմիւզեանի անունները։ Հ· Ա· Բագրատունին՝ դասականութեան խոշորագոյն ներկայացուցիչը հայ գրականութեան մէջ, ընդհանրապէս այդ ուղղութեան ակնառու դէմքերից մէկն է համաշխարհային առումով։ Թողնենք նրա բազմաղան անուններով «Տաղերը» եւ յիշենք հանրայայտ «Հայկ դիւցազն» երկը[55], որ ջատագովում է հայրենասիրութիւն, քաղաքացիական պարտքի գիտակցում ու առաքինութիւն, ընթերցողին սէր է ներշնչում հայրենի աշխարհի եւ ազատատենչ ու քաջամարտիկ նախնիների հանդէպ։

Հայկական դասականութեան առաւել ակնառու արտայայտութիւնը Մխիթարեան հեղինակների ստեղծած թատերգրութիւնն է։ Վերջինս հիմնականում բաղկացած է ողբերգութիւններից, որոնց նիւթը վերցուած է քրիստոնէական սրբազան գրքերից եւ հայ ժողովրդի պատմութիւնից։ Այս բնագաւառի առաւել աչքի ընկնող հեղինակներից են Հ· Ղ· Ինճիճեանը, Հ· Գ· Աւետիքեանը, Հ· Մ· Ջախջախեանը, Հ· Ե· Թոմաճեանը, Հ· Ա· Բագրատունին, Հ· Պ· Մինասեանը, Հ· Ե· Էնտազեանը, Հ· Գ· Հիւրմիւզեանը եւ ուրիշներ։

Բանաստեղծութեան ասպարէզում Մխիթարեանների պայծառագոյն դէմքը եղաւ ու մնաց Հ· Ղ· Ալիշանը։ Թէեւ մէկ տասնամեակից մի քիչ աւելի է տեւել Ալիշանի բանաստեղծական ու ստեղծագործական կեանքը, բայց նրա թողած ժառանգութիւնը հսկայական է։ «Նուագք»[56] (Ա–Ե հատոր) ընդհանուր խորագրի տակ նա զետեղել է իր «Մանկունի», «Մաղթունի», «Բնունի», «Հայրունի», «Տէրունի» եւ «Տխրունի» բանաստեղծութիւնների հատորները։ Առանձնապէս մեծ ընդունելութեան են արժանանում նրա «Հայրունի» գրքում ամփոփուած բանաստեղծութիւնները, որոնք, ինչպէս եւ Ալիշանի քնարերգութեան հիմնական մասը, պատմա–հայրենասիրական հենք ու բովանդակութիւն ունեն։ Ալիշանի հայրենասիրութիւնը շատ խորն է, անկեղծ ու վարակիչ։ Իւրաքանչիւր տող ու բառ ներծծուած է բանաստեղծին այրող այն հիմնական յոյսով ու մտահոգութեամբ, որը վերաբերում է անցեալի վերյուշը հայրենասիրութեան ու մարտական դարթօնքի աղդակ դարձնելուն։ Ալիշանի «Հայոց աշխարհիկ», «Հրաղդան», «Հայ հայրենիքը», «Ողբամ զքեզ Հայոց աշխարհ», «Մասիսու սարերն», «Հայ հանճար» բանաստեղծութիւնները, ինչպէս եւ «Պլպուլն Սեւայրի», «Աչոտ երկաթ ի ծովուն Սեւանայ», «Լուսնկայն զերեզմանաց Հայոց» քերթուածները նրա քնարերգութեան լաւագոյն նմոյշներից են եւ խոր հետք են թողել մեր գրականութեան մէջ։ Ալիշանի քնարերգութեան, գեղարուեստական ստեղծագործութիւնների լեզուա–ոճական առանձնայատկութիւնները, նրանց կենդանի, գրական պատկերաւորութիւնը, ժողովրդին հասկանալի, նրա բառ ու բանով գրուած լինելը, նրա՝ անմիջական առօրեային արձագանգելու ձգտումը կենսահաստատ թարմութիւն բերեցին հայ բանաստեղծութեան անդաստանը։

55· Հ· Ա· ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, Հայկ դիւցազն, Վենետիկ, 1858։

56· Հ· Ղ· ԱԼԻՇԱՆ, Նուագք, Վենետիկ, 1857։

* * *

Յատուկ գնահատութեան է արժանի Մխիթարեանների հրատարակչական գործունէութիւնը։ Նրանց վերոյիշեալ ողջ գրական ժառանգութիւնը տպագրուել է իրենց Միաբանութեան տպարանում։ Այստեղ են լոյս տեսել Աստուածաշնչի լաւագոյն հրատարակութիւններից մի քանիսը, մեր պատմիչների եւ միւս մատենագիրների բազմաթիւ երկեր, պատմական–գիտական փաստաթղթեր, դասագրքեր եւ այլն։ Տպարանը օտար լեզուների տառերի չափազանց հարուստ ժողովածու ունի։ Այս տպարանում են ծնունդ առել բազմաթիւ սեւ ու գունաւոր առանձին նկարներ, յուշատետրեր, պատկերազարդ հանդէսներ, քարտէզներ։ Տպարանը արժանացել է միջազգային մի շարք մրցանակների։

Մխիթարեանները գիտեն ոչ միայն ուսումնասիրութեան նիւթ դարձնել մշակութային ամէն տեսակի գանձերը, այլեւ կորստից փրկել, պահպանել ու խնամել դրանք։ Բաւական է ասել, որ նրանց է պատկանում հայերէն ձեռագրերի երրորդ ամենահարուստ Մատենադարանը, որն ունի շուրջ 4000 ձեռագիր։ Դրանց մէջ քիչ չեն այնպիսիները, որոնք մատենագրական, բնագրական, գիտական, հնագրական եւ մանրանկարչական բացառիկ արժէք ունեն։ Նրանք ունեն նաեւ «Մեծ Մատենադարան» եւ «Գիտութեանց թանգարան», որոնցում պահպանւում են ոչ միայն հայ, այլեւ միւս ժողովուրդների նիւթական ու հոգեւոր մշակոյթի՝ գեղարուեստի, արհեստագործութեան եւ այլ բնագաւառների հազուագիւտ նմոյշներ ու իրեր։

© National Library of Armenia